Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 4 (388) 1-17 մարտ, 2016թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Կինը արժեք է... եւ ոչ միայն տոն օրերին

Մեծ ու բացառիկ է հայ կնոջ դերը թե՛ հայ օջախում, թե՛ հասարակական-քաղաքական կյանքում: Հայ կինը ոչ միայն անփոխարինելի է ընտանիքի եւ ազգային արժեքների պահպանման առաքելության մեջ, այլեւ յուրօրինակ դեր ունի երկրի պետական, քաղաքական, կուսակցական մարմիններում ունեցած նկատելի ներդրումով՝ իր ներկայությամբ հարստացնելով ու ներդաշնակ դարձնելով հասարակական-քաղաքական կյանքը:

Կինը եւ հասարակության ապագան սերտաճած են միմյանց: Այս ճշմարտությունը հատկապես կարեւոր է այսօր, երբ աշխարհը կանգնած է բազում ու բազմապիսի մարտահրավերների առաջ, երբ այդ մարտահրավերներին դիմակայելու եւ ազգի շառավիղը պահպանելու համար ամենից առաջ կայուն ու շրջահայաց սերունդ է անհրաժեշտ, հայրենիքի հոգսով ու ապագայով սրտացավ, նախաձեռնող, նպատակասլաց: Հայ կինը հայրենիքի հենասյունն է. որքան ամուր է հենասյունը, այնքան ամուր է նրա վրայի կառույցը:

Մեծ է հայ կնոջ դերը նաեւ մեր պատմության վճռորոշ ու ճակատագրական օրերին: Հայրենիքի ազատագրման ու անկախության պահպանման ոգով զինված հայ կինը դարձավ ազատագրական պայքարի զինվորն ու առաջամարտիկը՝ հայ տղամարդու կողքին ոչ միայն պայքարելով, այլեւ պայքարի ոգի հաղորդելով: Բավական է անդրադարձ կատարել պատմությանը: Ապացույցների շղթան հասնում է մինչեւ մեր օրերը, որովհետեւ այսօր էլ նա ե՛ւ զինվոր է, ե՛ւ ուսուցիչ, ե՛ւ ղեկավար, ե՛ւ անփոխարինելի՝ ընտանիքում:

Հայաստանի եւ Արցախի քաղաքական կյանքում վերջին տարիներին զգալիորեն աճել է կնոջ դերը: Այսօր կանայք ղեկավարում են տարբեր գերատեսչություններ, խորհրդարանական խմբակցություններ ու հանձնաժողովներ, ստանձնում պետական բարձր պաշտոններ, հանդես գալիս քաղաքական ներքին ու արտաքին հարթակներում: Այսօր Արցախի խորհրդարանական ու արտախորհրդարանական բոլոր քաղաքական ուժերում ընդգրկված են նաեւ կանայք, եւ եթե անցյալում դա խորթ էր թվում, ապա այսօր կարծես թե օրինաչափություն է դառնում:

Այս ամենով հանդերձ, հիմնական պարադոքսն այն է, որ այսօր, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեր երկում գեղեցիկ սեռը շարունակվում է մնալ որպես խոցելի շերտ: Կյանքի շարունակականությունն ապահովող էակը հավաքական առումով ունի բազմաթիվ սոցիալական, ընտանեկան եւ այլ խնդիրներ:

Կինն իր կենսագործունեությունն ապահովելու համար, ընդհանուր առմամբ, կախվածություն ունի տղամարդուց: Խնդիրը հիմնականում սոցիալական եւ աշխատանքային զբաղվածության մասին է, որոնք ընտանիքի հոգսն ու խնամվածությունն իր ուսերին կրող կնոջ համար հաճախ դառնում են իրական գերխնդիր:

Կինը պետք է իրեն արժեւորված ու պաշտպանված զգա, ուշադրության կենտրոնում լինի ոչ միայն տոն օրերին կամ առիթից առիթ, այլեւ՝ ընդհանրապես:

Ուժ ու կորով՝ բոլոր հայ կանանց: Նրանց վաստակն անգնահատելի է:

Ուրեմն՝ շնորհավոր եւ շնորհակալություն նրանց:

Բակո Սահակյանը շնորհավորական ուղերձ է հղել Կանանց միջազգային օրվա կապակցությամբ

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը շնորհավորական ուղերձ է հղել մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ, որում ասված է.

Թանկագի՛ն կանայք,

Արցախի Հանրապետության իշխանությունների եւ անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ ձեզ Կանանց միջազգային օրվա առթիվ:

Ավանդաբար Մարտի 8-ը նշվում էր՝ որպես կանանց իրավունքների պաշտպանության օր: Մեզ համար այն եւս մեկ առիթ է գնահատելու եւ արժեւորելու ձեր աշխատանքը, արտահայտելու մեր խորին երախտագիտությունը, սերն ու հարգանքը: Դուք միշտ մեզ հետ եք, մեր կողքին. Արցախյան ազատամարտի առաջին իսկ օրից, երբ մեր արդարացի պահանջն էինք ներկայացնում աշխարհին, կենաց-մահու պայքար մղում թշնամու դեմ, հետագայում, երբ պետք էր ոտքի կանգնեցնել տնտեսությունը, վերականգնել ավերված գյուղերն ու քաղաքները, կերտել մեր անկախ պետականությունը, եւ այսօր, երբ անհրաժեշտ է շենացնել ու զորացնել Արցախը, դաստիարակել արժանի սերունդ: Դուք ամեն տեղ ձեր անգնահատելի ավանդն եք բերում՝ մնալով միշտ գեղեցիկ ու հմայիչ:

Մեկ անգամ եւս շնորհավորում եմ ձեզ գարնանային այս հրաշալի տոնի առթիվ եւ մաղթում, որ միշտ լինեք առողջ ու երջանիկ, ուրախ ու անկրկնելի: Իսկ մենք կանենք հնարավորը, որպեսզի ձեր կյանքը լինի ավելի բարեկեցիկ ու խաղաղ:

Ամենայն բարիք ձեզ, սիրելի՛ արցախուհիներ:

Քաղաքական հանդիպումներ Ֆրանսիայում

Արցախյան շարժման 28-ամյակի շրջանակներում Ֆրանսիայում կազմակերպված «Զորակցություն Արցախին ու Հայկական բանակին» խորագիրը կրող միջոցառումներին մասնակցելու նպատակով Արեւմտյան Եվրոպայի ՀՅԴ ԿԿ հրավերով Ֆրանսիայում է գտնվում ՀՅ Դաշնակցության Արցախի ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը:

Կարդացեք 2-րդ էջում

Ֆլանդրիայի խորհրդարանի անդամներն այցելել էին Արցախ



Մարտի 14-ին ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախաձեռնությամբ Արցախ էր ժամանել Բելգիայի թագավորության Ֆլանդրիայի խորհրդարանի պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին նաեւ Բելգիայից եւ Հոլանդիայից մի շարք քաղաքագետներ, ակադեմիկոսներ եւ ուսուցիչներ: Պատվիրակությանն ուղեկցում էր ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանը...

Կարդացեք 3-րդ էջում

Վիգեն Հովսեփյան. Ջորջիա նահանգի կողմից ԼՂՀ անկախության ճանաչումը քաղաքական կարեւոր ձեռքբերում է

ԱՄՆ Ջորջիա նահանգի օրենսդիր մարմնի կողմից օրերս ԼՂՀ անկախության ճանաչմանը, նշել է, որ այս իրադարձությունը քաղաքական կարեւոր ձեռքբերում է եւ ունի քարոզչական մեծ արժեք:

«ՀՅԴ Հայ Դատի գրասենյակներն ԱՄՆ-ում որդեգրել են երկու հիմնական մարտավարություններ՝ մնայուն ու հետեւողական աշխատանքներ իրականացնելով ԼՂՀ պաշտոնական ճանաչման ուղղությամբ: Առաջինը՝ ԱՄՆ առավելագույն թվով նահանգներում, մանավանդ՝ ազդեցիկ նահանգներում, քարոզչական աշխատանքներ տանելն է, իսկ երկրորդը՝ նույն մակարդակով եւ նպատակով աշխատել եւ քարոզչություն տանել Կոնգրեսի եւ կենտրոնական իշխանությունների շրջանակներում,- ասել է Վ. Հովսեփյանը եւ նշել, որ զուգահեռ ընթացող այս աշխատանքներն են, որոնք պիտի հասցնեն ԱՄՆ-ի կողմից ԼՂՀ պաշտոնական ճանաչմանը»:

Անդրադառնալով ԱՄՆ Կոնգրեսի Հայաստանի աջակցության խմբի համանախագահներ Ֆրենկ Փալոնի եւ Ռոբերտ Դոլդի՝ ԱՄՆ Կոնգրեսի անդամներին հղած նամակին, որում կոչ է արվում միանալ իրենց՝ Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին 2017թ. ֆինանսական տարում ավելի շատ օգնություն ցուցաբերելու կոչին, Վ. Հովսեփյանը նշել է. «Մեր բոլոր քաղաքական ճիգերի եւ ճնշումների գլխավոր կիզակետն ԱՄՆ-ի կողմից ԼՂՀ-ի ճանաչումն է, որքան էլ որ ոմանք թերահավատորեն մոտենան այդ հավանականությանը: Մեր բոլոր քայլերն այդ ուղղությամբ են տարվում: Հետեւաբար, մեզ աջակցող կոնգրեսականների ճիգերն այս գծով պետք է գնահատել»:

«ԱՄՆ-ում ներկա քաղաքական եւ տնտեսական մթնոլորտի պատճառով բոլոր արտաքին օժանդակություններում կրճատումներ են տեղի ունենում: Նաեւ, նկատի ունենալով ադրբեջանական ու թուրքական ճնշումները, մեր համեմատական հաջողությունն անգամ պետք է ընդունել որպես հաղթանակ»,- ասել է Վ. Հովսեփյանը եւ շեշտել, որ հարցը մի քանի միլիոն դոլարի օժանդակության մասին չէ, այլ դրա քաղաքական արժեքի:

Խոսելով 2016-ին կայանալիք ԱՄՆ նախագահական ընտրությունների մասին, Վ. Հովսեփյանն ասել է, որ ՀՅԴ Հայ Դատի գրասենյակներն ամենայն ուշադրությամբ հետեւում են ԱՄՆ-ում զարգացող գործընթացներին եւ կապի մեջ են մի շարք թեկնածուների հետ՝ նրանց ծանոթացնելու եւ ներկայացնելու հայ ազգին հետաքրքրող խնդիրները, ինչպիսիք են՝ Հայաստանը, Արցախը եւ Հայ Դատը:

«ԱՊԱՌԱԺ»

Քաղաքական հանդիպումներ Ֆրանսիայում

Արցախյան շարժման 28-ամյակի շրջանակներում Ֆրանսիայում կազմակերպված «Ջորակցություն Արցախին ու Հայկական բանակին» խորագիրը կրող միջոցառումներին մասնակցելու նպատակով Արեւմտյան Եվրոպայի ՀՅԴ ԿԿ հիրավերով Ֆրանսիայում է գտնվում ՀՅ Դաշնակցության Արցախի ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը:

Այցի առաջին օրերին՝ մարտի 11-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում, մարտի 12-ին Վալանսում, իսկ 13-ին Փարիզում Դ.Իշխանյանը մասնակցել է վերոնշյալ քաղաքներում կազմակերպված միջոցառումներին:

Իշխանյանը հանդես է եկել «Արցախի ներկա քաղաքական եւ տնտեսական կացությունը» թեմայով դասախոսություններով, ինչպես նաեւ պատասխանել մեր հայրենակիցներին հուզող մի շարք հարցերի:

Փարիզում կազմակերպված միջոցառմանը ներկա են եղել ՀՅԴ Բյուրոյի անդամ Մուրատ Փափազյանը, Արեւմտյան Եվրոպայի ՀՅԴ ԿԿ անդամներ եւ Ֆրանսիայում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Հ.Գեւորգյանը:

Դավիթ Իշխանյանը եւ ՀՅԴ Բյուրոյի անդամ Մուրատ Փափազյանը Ֆրանսիայի Ազգային ժողովում հանդիպում են ունեցել Ֆրանսիայի ԱԺ սոցիալիստական խմբակցության ղեկավար Բրունո Լե Ռուի եւ սենատոր, Արֆորվիլ քաղաքի քաղաքապետ Լյուկ Կարվունազի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Արցախում տիրող ընդհանուր իրավիճակը, անդրադարձել են Ղարաբաղյան հակամարտությանը, այսօրվա ընդհանուր կացությանն ու Ղարաբաղի ներքին կյանքի զարգացման հեռանկարներին:

Մարտի 11-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում ՀՅ Դաշնակցության Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը հանդիպել է Մարսելի փոխքաղաքապետ Դիդիեր Փառաքյանին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Մարսել-Արցախ համագործակցության հեռանկարները:

Դ.Իշխանյանը ներկայացրել է այն ոլորտները, որոնց շրջանակներում կարող են ունենալ հետագա համագործակցություն:

Մարտի 12-ին Վալանս քաղաքում Դ.Իշխանյանը հանդիպել է Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր, Պաշտպանության հանձնաժողովի անդամ Նաթալի Նիսոնի հետ՝ քննարկելով հետագա համագործակցության հնարավորությունները:

Նույն օրը Վալանսի հայ մշակութային կենտրոնում տեղի են ունեցել հանդիպումներ Վալանսի քաղաքապետ Նիկոլա Դարագոնի եւ Բուրգ լե Վալանսի քաղաքապետ Մարլեն Մուրիերի հետ:

Հանդիպումներին մասնակցել են Արեւմտյան Եվրոպայի ՀՅԴ ԿԿ անդամներ Հրաչ Վարժապետյանը, Տիգրան Շահմիրյանը եւ Անդրանիկ Նշանյանը:

Առաջիկա օրերին Դավիթ Իշխանյանը մասնակցելու է նաեւ Ֆրանսիայի Լիոն քաղաքում, այնուհետեւ Բրյուսելում եւ Հոլանդիայում կազմակերպվող ձեռնարկներին:

Հիշեցնենք, որ անցած տարի, «Ֆրանսիական օրեր Արցախում» ծրագրի շրջանակներում ԼՂՀ ԱԺ-ում կայացած «Ղարաբաղ-Ֆրանսիա» եւ

«Ֆրանսիա-Ղարաբաղ» բարեկամության շրջանակների ու բարեկամացած քաղաքների ներկայացուցիչների համատեղ նիստի ընթացքում ելույթ ունեցան Արցախի հետ բարեկամացած մի շարք ֆրանսիական քաղաքների քաղաքապետեր ու տեղակալներ:

«Ես չեմ մտածում Ադրբեջանի սեւ ցուցակում հայտնվելու մասին: Ընդհակառակը, դա ինձ քաջալերում է»,- նշել էր Բուրգ Լե Վալանսի քաղաքապետ Մարլեն Մուրիեն՝ շեշտելով, որ գոհ ու տպավորված է Արցախով ու Արցախի ժողովրդով: «Ձեր ճանապարհը երկար է, եւ մենք պետք է քայլենք ձեզ հետ»,- կարեւորել էր նա:

Վալանսի քաղաքապետ Նիկոլա Դարագոնին էլ նշել էր. «Ինձ ասել են, որ Ադրբեջանը սեւ ցուցակ ունի եւ որ ընդգրկվել եմ այդ ցուցակի մեջ, որովհետեւ պայքարում եմ հանուն ժողովրդավարության եւ ազատության: Ինձ չի մտահոգում այդ սեւ ցուցակը»:

Նշենք նաեւ, որ անցած տարի ՀՅԴ-ի նախաձեռնությամբ Արցախում էին Ֆրանսիայի ԱԺ սոցիալիստական խմբակցության անդամները՝ խմբակցության ղեկավար Բրունո Լե Ռուի գլխավորությամբ:

«Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը պետք է միշտ առաջնորդվեն ժողովրդավարության եւ ազատության սկզբունքներով: Այդ երկուսն ամեն ինչից զորավոր են եւ վերջում միշտ հաղթում են»,- իր այցի ընթացքում շեշտել էր Բրունո Լե Ռուն:

«ԱՊԱՌԱԺ»

Կառավարությունը հաստատել է ԼՂՀ տնտեսական զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը

Մարտի 10-ին տեղի է ունեցել Արցախի Հանրապետության կառավարության հերթական նիստը:

Նիստում հաստատվել է ԼՂՀ տնտեսական զարգացմանն ուղղված, 2016թ. պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագիրը: Այն նպատակաուղղված է տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացմանը, պետական աջակցության գործիքների կիրառման միջոցով տեղական արտադրության ծավալների ավելացման խթանմանը : Ծրագրով նախատեսվում է նաեւ ընդլայնել տեղական արտադրության արտահանելի հատվածը, մասնավորապես՝ նպաստել արտահանման տեսականու եւ շուկաների դիվերսիֆիկացմանը եւ էլ ավելի խորացնել պետություն-մասնավոր հատված համագործակցությունը: Ծրագրի իրագործման համար նախատեսված է պետական բյուջեից հատկացնել 2,530 մլրդ դրամ գումար:

Կառավարությունը հաստատել է ԼՂՀ 2016թ. պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման գծով ծառայությունների գնման պետական պատվերի ծրագիրը եւ ցանկը: Ծրագրի համաձայն՝ հանրապետությունում կիրականացվի եւս մեկ սոցիալական միջոցառում՝ պետական աջակցությամբ հանրապետության բնակչությունը կունենա անվճար առնվազն ութ հեռուստաալիքների եւ երեք ռադիոալիքների ընդունման հնարավորություն:

Գործադիր մարմնի կողմից հաստատվել են ԼՂՀ 2016թ. զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագիրը, դրա իրականացման միջոցառումների ցանկը, ինչպես նաեւ 2016թ. պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող՝ ԼՂՀ պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների եւ պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման ծրագիրը եւ դրա իրականացման միջոցառումների ցանկը:

Վարչապետը հանձնարարել է ստեղծել աշխատանքային խումբ՝ քննարկելու եւ պատրաստելու Գտչավանքի եւ Ամարասի վանքերի վերականգնման ճշգրիտ նախագծերը, որպեսզի, ըստ դրանց, հստակեցվեն անելիքները եւ միջոցներ հայթայթվեն այդ արժեքավոր հուշարձանների պատշաճ վերականգնման համար:

Կառավարության որոշմամբ՝ սահմանվել են 2016թ. համար էլեկտրական էներգիայի ու բնական գազի հաղորդման (փոխադրման) եւ բաշխման ցանցերում նորմատիվային (բնական) կորուստների առավելագույն չափերը: «Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերության համար այդ չափը սահմանվել է 15,6 տոկոս, իսկ «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության համար՝ 5,1 տոկոս: Այդ որոշման արդյունքում համապատասխան մատակարարող ընկերությունների համար անհրաժեշտություն չի առաջանա կատարել անխուսափելի կորուստների հետ կապված լրացուցիչ ծախսեր:

Նիստում հաստատվել է ԼՂՀ կրթության, գիտության եւ սպորտի նախարարության 2016թ. կենտրոնացված միջոցառումների իրականացման ծրագիրը, ինչպես նաեւ փոփոխություն է մտցվել «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» N 757-Ն որոշման մեջ, որն ուղղված է ոլորտի օրենսդրական դաշտի բարելավմանը:

Գործադիր մարմինը հաստատել է համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը եւ ժամանակացույցը: Որոշման ընդունումը պայմանավորված է «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքով ամրագրված դրույթներով: Որոշմամբ նախատեսվում է ներդնել համընդհանուր ներառական կրթական համակարգ, յուրաքանչյուր երեխայի համար ստեղծել կրթության առանձնահատուկ պայմաններ, ինչպես նաեւ ներդնել այդ կրթության կազմակերպման եւ գնահատման համար անհրաժեշտ մեխանիզմներ:

Կառավարությունը փոփոխություն է կատարել իր՝ 2015թ. հունիսի 8-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղական կամ քաղաքային՝ բացառությամբ Ստեփանակերտ եւ Շուշի քաղաքների, բնակավայրերում մշտապես բնակվող երիտասարդ ընտանիքներին բնակելի տներ կառուցելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» N 353-Ն որոշման մեջ, որով վերանայվել է նախորդ որոշմամբ հաստատված երիտասարդ ընտանիքի համար սահմանված տարիքային ցենզը: Արդյունքում, նախկին 18-35 տարեկանի փոխարեն՝ ծրագրից կարող են օգտվել 18-40 տարեկան ամուսիններից կազմված, հանրապետության գյուղական կամ քաղաքային՝ բացառությամբ Ստեփանակերտ եւ Շուշի քաղաքների, բնակավայրում մշտապես բնակվող ընտանիքները:

«3 մլն դրամը բավարար գումար չէ տուն կառուցելու համար, այլ աջակցություն է կառուցման գործընթացին, որի միջոցով զգալիորեն խթանում ենք բնակարանաշինությունը շրջաններում: Մենք ակնկալում էինք, որ հայտերը շատ են լինելու, եւ մեր միջոցները չեն բավարարելու սկզբնական փուլում: Այժմ, երբ արդեն մի քանի տասնյակ ընտանիքների տրամադրել ենք դրամաշնորհ, տարիքային շեմը բարձրացնում ենք, որպեսզի ավելի շատ ընտանիքներ կարողանան օգտվել այս ծրագրից: Հանձնարարում եմ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը եւ վարչակազմերին՝ շրջաններում գույքագրել կարիքներն ու հնարավոր հայտերը, որպեսզի աստիճանաբար ընդլայնենք շահառուների տարիքային կազմն ու քանակը: Ավելին՝ հեռու չէ այն օրը, երբ լրիվությամբ կվերացվի տարիքային սահմանափակումը»,- ասել է վարչապետը՝ անդրադառնալով որոշմանը:

Կառավարության որոշմամբ անժամկետ բնույթ է հաղորդվել հանրապետության բարձրագույն, նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում առկա ուսուցման ձեւով ուսումնառու անձանց ընդհանուր օգտագործման ներքաղաքային ուղեւորատար տրանսպորտով (բացառությամբ տաքսի ավտոմոբիլների) արտոնյալ երթեւեկության համար պետական ֆինանսական աջակցության տրամադրման փորձնական ծրագրին, որն աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից դրական եւ արդյունավետ է գնահատվել:

Գործադիր մարմինը հաստատել է պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող մշակութային եւ երիտասարդական միջոցառումների ծրագիրը: 2016թ. մշակութային միջոցառումների համար պետական բյուջեից հատկացվելու է 102 մլն դրամ, իսկ հիմնականում շրջանների երիտասարդական կառույցների գործունեության ակտիվացմանն ուղղված երիտասարդական միջոցառումների համար՝ 36 մլն դրամ:

Կառավարության կողմից հաստատվել է նաեւ պետական անտառային ֆոնդում անտառային միջոցառումների 2016թ. ծրագիրը: Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար պետբյուջեից կհատկացվի 6,623 մլն դրամ:

Գործադիր մարմնի հավանությանն են արժանացել ԼՂՀ տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձեւավորման եւ զարգացման հայեցակարգն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրը, որի նպատակն է Արցախի Հանրապետության բոլոր շրջաններում ունենալ կամավորական փրկարարական եւ հրշեջ-փրկարարական միավորումներ, ինչպես նաեւ հասարակական բնագավառում ստեղծել այդ շարժման զարգացման համար իրավական, սոցիալական հիմքեր եւ նյութական պայմաններ:

Նիստում ընդունված մեկ այլ որոշմամբ՝ ստեղծվել է կառավարական հանձնաժողով եւ հաստատվել դրա անհատական կազմն ու անդամների գործառույթները՝ Հաղթանակի տոնի, ԼՂՀ պաշտպանության բանակի եւ Շուշիի ազատագրման օրվա 24-րդ տարեդարձի տոնակատարությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով:

ԱՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

Ֆլանդրիայի խորհրդարանի անդամներն այցելել էին Արցախ

Մարտի 14-ին ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախաձեռնությամբ Արցախ էր ժամանել Բելգիայի թագավորության Ֆլանդրիայի խորհրդարանի պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին նաեւ Բելգիայից եւ Հոլանդիայից մի շարք քաղաքագետներ, ակադեմիկոսներ եւ ուսուցիչներ: Պատվիրակությանն ուղեկցում էին ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանը եւ ՀՀ ԱԺ պատգամավոր Թեւան Պողոսյանը:

Բելգիայի Սենատի առաջին փոխնախագահ Կարլ Ֆոնլաուվեն, Ֆլամանդական խորհրդարանի անդամներ Կարիմ ֆոն Օվերմեյերը, Վարդ Քեննեսը, Մարկ Հենդրիքսը, պրոֆեսոր Փոլ Միրթսը մարտի 15-ին ԼՂՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում հանդիպում են ունեցել ԼՂՀ օրենսդիր, գործադիր եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ:

ԼՂՀ ԱԺ նախագահը ողջունել է հյուրերին եւ կարեւոր նրանց այցն Արցախ՝ միաժամանակ շեշտելով, որ ինչպես նախորդ այցերի ժամանակ, այս անգամ եւս այցի կազմակերպման գործում մեծ է ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի հանձնախմբի դերը, հանձինս Գասպար Կարապետյանի:

Հյուրերն առիթ են ունեցել հանդես գալու ելույթներով՝ խոսելով Արցախի,

նրա ներկա կարգավիճակի եւ համագործակցության հեռանկարների մասին:

«500 կմ է բաժանում Ֆլանդրիան Հայաստանից ու Արցախից, բայց ես խորապես համոզված եմ, որ երկու ժողովուրդներն ունեն շատ ընդհանրություններ: Համբերատարությունն ու վճռականությունն են այն արժեքները, որոնք մենք գտել ենք այստեղ,- նշել է Կարիմ ֆոն Օվերմեյերը եւ ավելացրել,- Արցախը ոչ միայն ամրոց է Հայաստանի, այլ նաեւ՝ Եվրոպայի համար: Սա այն հանգամանքն է, որի պատճառով մենք այստեղ ենք գտնվում»:

Սենատոր Կարլ Ֆոնլաուվենը շեշտել է. «Ես չեմ կարող համեմատել ինքնության համար ֆլամանդական խաղաղ պայքարը Լեռնային Ղարաբաղում ստեղծված բարդ իրավիճակի հետ: Դժվար է պատկերացնել, որ նման հանդիպում շուրջ երեսուն տարի առաջ հնարավոր չէր կազմակերպել զուտ այն պատճառով, որ այստեղ պատերազմ էր»:

«Այսօր մենք այստեղ ենք՝ արտահայտելու մեր համերաշխությունը փոքր ժողովրդավարական տարածաշրջանի հանդեպ: Մենք այստեղ ենք, որպեսզի մոտիկից տեղեկացված լինենք Արցախի մասին,- ասել է Վարդ Քեննեսը եւ հավելել,- ես Արցախը համարում եմ քրիտոնեական աշխարհի մաս, որին ինքս եմ պատկանում»:

Պատվիրակության մյուս անդամները եւս հանդես են եկել ելույթներով, կիսվել Արցախի մասին իրենց տպավորություններով:

Պատվիրակությունն այցի ընթացքում հանդիպումներ է ունեցել նաեւ ԼՂՀ նախագահի եւ Արցախի թեմի առաջնորդի հետ, ինչպես նաեւ մի շարք ճանաչողական այցելություններ է կատարել: Մարտի 16-ին տեղի է ունեցել մամլո ասուլիս:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ճակատագրապաշտությո՞ւն

Ճակատագրապաշտությունը (փիլիսոփայական տերմինաբանությամբ՝ ֆաթալիզմ) այն հիմնական պատճառն է, որին հետեւելով՝ կործանվում են ճակատագրեր: Այդ օրինաչափությունը ոչ միայն անհատական ճակատագրերին է վերաբերում, այլ նաեւ մարդկային այս կամ այն խմբավորումներին՝ ընտանիքից մինչեւ ազգ:

Ճակատագրապաշտության մատնելը պատմության ընթացքում կիրառվել է տարբեր բռնապետերի կողմից՝ հասարակությանը առկա դրությանը հաշտեցնելու եւ հնազանդեցնելու համար: Անժխտելի է, որ մարդկության պատմության մեջ եղել են պահեր, երբ տվյալ հասարակությունն այլ ելք չի ունեցել, բացի իրերի հոլովույթին ենթարկվելուց կամ ժամանակի թելադրանքին «հանձնվելուց»:

Իսկ այն դեպքում, երբ այդ ենթարկվածությունը գիտակցաբար է տեղի ունենում, չի կարելի համարել ճակատագրապաշտություն: Տվյալ դեպքում կայացվում է որոշում՝ ենթարկվել պարտադրանքին:

Պատմական ճեղքումները, բացի հարմար պահը ճիշտ օգտագործելուց, առաջանում են այն պարագաներում, երբ ինչ-որ տեղ ինչ-որ խմբավորում չի ենթարկվում պարտադրանքին՝ ըմբոստանում է:

Իսկ քանի որ «սկզբումն էր բանը», այդ ըմբոստությունն իր մեջ պարունակում է նախնական պատրաստություն ոչ միայն տեխնիկական, այլ, որ ավելի կարեւոր է, գաղափարական:

Վերադառնանք ճակատագրապաշտությանը: Երբ չի լինում «բան»-ը, այլ ելք չի մնում, բացի ճակատագրապաշտությունից:

Վերը նշված մտքերն ինձ մոտ առաջացան, երբ մի միջոցառման ժամանակ խոսում էին ԼՂՀ-ում Սահմանադրության փոփոխությունների գործընթացի մասին: Ներկաների մեջ կային Արցախյան ազատամարտի մասնակիցներ ու պայքարի հունով անցած անձնավորություններ: Զարմանալիորեն՝ նրանք, ովքեր իրենց կյանքի ինչ-որ պահին կայացրել էին կարեւոր որոշում, կրկնում էին մի միտք. «Քանի որ Հայաստանում փոխվել է Սահմանադրությունը, մենք այլ ելք չունենք՝ այստեղ նույնպես փոփոխվելու է»:

Հարցի այսպիսի մոտեցումը կարելի է համարել պատճառ, սակայն ոչ պատճառաբանված: Հարց է առաջանում՝ սա պատճառ՝ է, որ փոխվի Սահմանադրությունը, թե՞ ճակատագրապաշտություն:

Հասկանում ենք, որ Արցախի օրենսդրական դաշտը նույնացված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սակայն չմոռանանք նաեւ, որ մինչեւ 2005 թ. Արցախը Սահմանադրություն չունենալով՝ չի ունեցել օրենսդրական ճգնաժամ:

Առաջիկա օրերին Արցախի հասարակական-քաղաքական դաշտում քննարկվելու է Սահմանադրությունների փոփոխությունների հարցը: Անկախ նրանից, թե դեմ կամ կողմ ենք այդ փոփոխություններին, պետք է հարցը քննարկել եւ որոշում կայացնելու ունակությամբ եւ կարողությամբ օժտվել, չենթարկվել, այլ կայացնել որոշում:

Դ.Գ.-Ամեն տեսակի տարընթերցումներից խուսափելու համար ուզում եմ նշել, որ ես անձամբ կողմնակից եմ սահմանադրական բարեփոխումներին, իսկ հիմնավորումները հաջորդիվ...

Արա ՊՈՒԼՈՒՉՅԱՆ

Ի՞նչ է ճանաչված կամ չճանաչված պետությունը

Շատ ենք խոսում Արցախի Հանրապետության ճանաչման կարեւորության մասին՝ հաճախակի նշելով, որ չճանաչվածության հանգամանքը միջազգային եւ ներքին հարցերում որոշակի խնդիրներ է առաջացնում մեր հանրապետության համար: Հաճախ էլ պարզապես խոսվում է դրա մասին՝ առանց հասկանալու խնդրի բուն իրավական նշանակությունը: Եվ այսպես, անդրադառնանք այդքան շատ կարեւոր՝ «Ճանաչման» հարցին:

Նախքան պետության ճանաչման մասին խոսելը՝ անհրաժեշտ է հասկանալ դրա բուն էությունը: Հաճախակի ենք լսում «պետության ճանաչում» եզրույթը, ինչը ինքնին այս խնդրի սխալ մեկնաբանում է: Նախ պետք է հասկանանք, որ ոչ թե պետությունն է ճանաչվում, այլեւ ճանաչվում են պետության իրավունքները եւ պարտականությունները՝ միջազգային հանրության շրջանակներում:

Այսպիսով, ի՞նչ է ընդհանրապես «չճանաչված պետություն» հասկացությունը: Փորձենք հասկանալ՝ ինչ է ճանաչումը, եւ արդյո՞ք այն ունի այդքան մեծ կարեւորություն:

Ընդհանրապես այդ մասին միջազգային իրավունքում շատ բան չկա արձանագրված: Ճանաչման գործընթացը ներկայացվում է որպես մի պետության լիազորություն՝ ճանաչել այլ պետություն կամ կառավարություն եւ նրա հետ ունենալ տարբեր տեսակի հարաբերություններ, այդ թվում նաեւ՝ դիվանագիտական: Բոլոր պետությունների ինքնիշխանության իրավահավասարության սկզբունքը համարվում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք: Այն ամրագրված է ՄԱԿ-ի Կանոնադրությունում, ինչպես նաեւ 1970 թ. ՄԱԿ-ի միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում, որում նշվում է. «Յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այլ պետությունների իրավասուբյեկտությունը»: Ինքնիշխանությունը պետության գերիշխանությունն է իր տարածքում եւ անկախությունը միջազգային հարաբերությունների ոլորտում, որն էլ կանխորոշում է պետությունների բնութագրումը՝ որպես միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտներ: Ինքնիշխանությունը համարվում է պետության մյուս բոլոր հիմնական իրավունքների հիմնաքարը:

Յուրաքանչյուր պետություն հենց առաջացման պահից օժտված է ինքնիշխանությամբ: Նրա իրավասուբյեկտությունը կախված չէ այլ պետությունների կամարտահայտությունից: Այն ավարտվում է միայն այդ պետության գոյության դադարումով: Պետության իրավասուբյեկտությունը կախված չէ նրա՝ այլ պետությունների կողմից ճանաչման հետ: Նույնիսկ դեռեւս չճանաչված պետություններն իրավունք ունեն իրենց տարածքային ամբողջականության եւ անկախության պաշտպանման: Նկատենք, որ միջազգային իրավունքը որեւէ կերպ չի սահմանափակում չճանաչված պետությունների ինքնիշխանությունը, եւ ուրեմն

չճանաչված պետություններին տալիս է ճանաչված պետությունների հետ համահավասար իրավունքներ եւ պարտականություններ, այսինքն՝ իրավասուբյեկտություն: Այստեղ կցանկանայի մի փոքր կանգ առնել միջազգային իրավական ճանաչման հասկացության եւ դրա հետեւանքների վրա: Ճանաչումը որեւէ պետության ակտն է, որով նա պատրաստակամություն է հայտնում եւ համարում է նպատակաուղղված ճանաչվող պետության հետ մտնել իրավական հարաբերությունների մեջ:

Միջազգային իրավունքում միջազգային իրավական ճանաչման նշանակության վերաբերյալ գոյություն ունի երկու տեսություն՝ հռչակագրային (դեկլարատիվ) եւ սահմանադիր (կոնստիտուտիվ): Հռչակագրային տեսության համաձայն՝ ճանաչումը միայն ամրագրում է նոր պետության (միջազգային իրավունքի նոր սուբյեկտի) առաջացումը, եւ ճանաչվող պետության համար մեծ իրավական նշանակություն չունի, քանի որ պետության՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի, գոյությունը կախված չէ նրա՝ այլ պետությունների կողմից ճանաչումից: Սահմանադիր տեսությունն ամրագրում է, որ պետությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, կարող է հանդես գալ միայն այլ պետության կողմից նրա ճանաչումից հետո, իսկ մինչեւ նոր պետության ճանաչումը՝ այն փաստորեն իրավաբանորեն գոյություն չունի: Վերոնշյալ տեսություններից միջազգային իրավունքի մասնագետները մեծամասամբ նախապատվությունը տալիս են հռչակագրային տեսությանը: Քանզի, սահմանադիր տեսությունը՝ պետության իրավաբանորեն գոյության փաստը կապում է նրա՝ այլ պետության կողմից ճանաչվելու հետ, ինչը հակասում է միջազգային իրավունքի որոշակի հիմնարար սկզբունքներին, ինչպիսիք են՝ բոլոր պետությունների հավասարության, պետության ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները, ինչպես նաեւ՝ հակասում է միջազգային իրավունքի կողմից ինքնիշխանության սկզբունքին տրված բնութագրմանը եւ էությանը: Բացի դրանից, միջազգային հարաբերությունների փորձը ցույց է տալիս, որ պետությունները կարող են գոյություն ունենալ երկար ժամանակ առանց նրանց իրավական ճանաչման այլ պետությունների կողմից: Սակայն, պետք է նշել նաեւ, որ պետության ճանաչումը ունի նաեւ որոշակի իրավական եւ քաղաքական նշանակություն: Ճանաչումը հեշտացնում է նոր պետության գոյությունը, բարելավում է քաղաքական եւ տնտեսական հարաբերություններն այլ պետությունների հետ, նորանկախ պետությանը դուրս է բերում միջազգային մեկուսացումից: Ճանաչված պետությունը հեշտությամբ է իրականացնում ինքնորոշվելու արդյունքում առաջացած իր միջազգային իրավասուբյեկտությունը: Նոր պետությունը միջազգային ճանաչման իրավունք ունի: Դա բխում է ՄԱԿ-ի Կանոնադրությունից, որի համաձայն՝ բոլոր պետությունները պարտավոր են միմյանց միջեւ բարեկամական հարաբերությունները զարգացնել, հարգել ինքնիշխանության եւ ինքնիշխան պետությունների հավասարությունը եւ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը:

Այսքանով հանդերձ, կարեւորելով Արցախի Հանրապետության միջազգային իրավական ճանաչումը, պետք է նաեւ հասկանալ, որ ճանաչումը չի առաջացնում նոր իրավունքներ եւ պարտականություններ, ավելին՝ կոնկրետ ճանաչման հանգամանքը չէ, որ պետություն է առաջացնում, այլեւ պետությունն առաջանում է հենց հռչակման պահին: Պետության գոյությունը կապելով ճանաչման հետ՝ խախտվում է միջազգային իրավունքի այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են՝ բոլոր պետությունների հավասարության, պետության ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները: Ուստի, մենք նախեւառաջ պետք է այսօր հասկանանք, որ Արցախը որպես պետություն արդեն կայացած է՝ միջազգային իրավունքի բոլոր իրավական հիմքերով հանդերձ, եւ պետք է պահանջենք Արցախի՝ միջազգային իրավունքների հարգումը եւ ճանաչումը:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ցեղասպանության հետքերը. Սիլվա Փայասլյան-Մինասյանի հիշողությունները

«Մինչեւ 7 տարեկանս մորաքույր էի ասում մի կնոջ, ով մորս մանկության ընկերուհին էր, ում հետ մեծացել են Հալեպի հայկական որբանոցում: Միայն 7 տարեկանում իմացա, որ մայրս հարազատ քույր եւ եղբայրներ ուներ,- պատմում է Սիլվա Փայասլյան-Մինասյանը:

Սիլվա Փայասլյան-Մինասյանին հանդիպեցի Սիդնեյում: Հյուրընկալ հայկական օջախում աչքի էին զարնվում բազմաթիվ ընտանեկան լուսանկարներ, որոնք կարծես թե լուռ վկայությունն են նրա, որ ընտանիքը ճյուղավորված եւ տարածված է ամբողջ աշխարհով մեկ, եւ որ այն ունի բազում պատմություններ, որոնք անխոս պատմում են ցեղասպանությունից փրկվածների, նրանց ամենօրյա պայքարի, ապագայի մասին: Խնամված, շարված են ամուսնու՝ Մինաս Մինասյանի եւ իր ընտանիքի պատմության նկարները, եզակի նմուշներ, որոնք հաջողվել է Սիրիայից տեղափոխել Սիդնեյ: Դրանց կողքին էլ նորերն են՝ 3 զավակների, 6 թոռների, հեռու եւ մոտ ապրող ազգականների նկարները: Սրանք էլ վկայությունն են նրա, որ անկախ բոլոր արհավիրքներից եւ փորձություններից, որ ստիպված էին դիմակայել, կյանքը շարունակվում է:

Սիլվա Փայասլյան-Մինասյանը Հայոց ցեղասպանությունից փրկվածների առաջին ժառանգն է: Արմատներով մարաշցի հայը՝ Միսաք Փայասլյանը, եւ մայրը՝ Ադել Կույումջյանը, 7 տարեկան էին, երբ սկսվեց Ցեղասպանությունը: Հոր ծնողներին թուրքերը դաժանաբար սպանեցին: 5 զավակները հայտնվեցին Թուրքիայի գերմանական որբանոցում: Որոշ ժամանակ անց եղբայրներին բաժանեցին՝ Միսաքին տեղափոխելով Սիրիայի հայկական որբանոց: Տարիներ անց 5 եղբայրները գտան իրար: Եղբայրներից մեկը՝ Սարգիսը, 1946 թվականին տեղափոխվեց Հայաստան. առայսօր էլ նրա ժառանգներն այնտեղ են բնակվում: Հովհաննեսը հաստատվել էր Արգենտինայում, մյուս եղբայրները՝ Սիրիայում:

Սիլվայի հորեղբայրը՝ Հակոբը, զինվորական էր: Միջին Արեւելքում տեղի ունեցած պատերազմում զոհվեց: Այդ ժամանակ կինը հղի էր: Նրա մահից 40 օր անց ծնվեց նրա միակ որդին՝ Սիմոն Փայասլյանը, ով 41 տարեկանում պիտի դառնար Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս՝ անվանակոչվելով Զարեհ Փայասլյան:

«Հայրս զուսպ մարդ էր, եւ հազվադեպ կտեսնեիր նրա հուզմունքը: Դժվարությամբ էր վերհիշում մանկությունը: Գերմանական որբանոցում անցկացրած տարիների, այնուհետեւ եղբայրներից բաժանման մասին խոսելիս՝ միշտ արցունքներ էին հայտնվում նրա աչքերին»,- հիշում է Սիլվան:

Սիլվա Փայասլյան-Մինասյանի մայրը՝ Ադել Կույումջյանը, ընտանիքի տասներորդ, ամենափոքր զավակն էր:

«Երբ կոտորածներն սկսվեցին, մայրս 7 տարեկան էր: Մյուս քույրերն ու եղբայրները ավելի մեծ էին, ոմանք արդեն իրենց ընտանիքներն ու զավակներն ունեին: Մորս գերդաստանը գրեթե ամբողջությամբ մորթվեց»,- պատմում է նա: Ողջ մնաց միայն եղբայրը՝ Արսենը, ով Ֆրանսիայում էր բնակվում: Սիլվան պատմում է, որ մայրը տեղեկություն ուներ, որ քույրերից մեկը՝ Լյուդվիան, ողջ է եւ դեռ ապրում է Մարաշում: Երկար տարիներ փնտրում էր նրան: Գիտեին, որ կոտորածի ժամանակ Լյուդվիայի ամուսնուն եւ 5 զավակներին սպանել, իրեն էլ շատ հայ աղջիկների պես բռնի կերպով ամուսնացրել են թուրքի հետ:

«Հալեպում թուրք հարեւանուհի ունեինք, ով Մարաշ ազգականներ ուներ եւ հաճախակի էր նրանց այցելում: Մի օր հայրս նրան ասաց, որ մորս քույրը հնարավոր է այնտեղ է ապրում, եթե կարող է բարեկամների միջոցով հետաքրքրվի, գուցե որոշ տեղեկություններ իմանա: Մի օր թրքուհի հարեւանը եկավ եւ ուրախությամբ հայտնեց, որ գտել է մորաքրոջս, եւ մորս փոխանցեց նրա բնակության հասցեն: 7 տարեկան էի, բայց այսօրվա պես հիշում եմ այդ օրը: 65 տարի առաջ էր, Ամանորից 15 օր առաջ: Հորս եւ մորս հետ ճանապարհվեցինք Մարաշ: 7 ժամ գնացքով, այնուհետեւ 4 ժամ ավտոբուսով ճամփա գնացինք: Ավտոբուսում մի երիտասարդ տղա կար: Հայրս նրան մեկնեց թղթի վրա գրված հասցեն՝ հարցնելով, թե արդյոք գիտի՞ այդ հասցեն: Տղան պատասխանեց, որ դա Մարաշում հարգանք ունեցող մարդու հասցե է, եւ որ նա սրճարան ունի Մարաշում, եւ համաձայնեց մեզ ուղեկցել:

Երբ հասանք Մարաշ, արդեն կեսգիշեր էր: Էլեկտրականություն չկար: Խավարի միջով երիտասարդը մեզ ուղեկցեց սրճարան: Այն փակ էր: Այնուհետեւ ուղեկցեց դեպի մի մեծ առանձնատուն: Հսկա դարպասը թակեցինք, ներսից մեկը մոմը ձեռքին դուրս եկավ եւ հարցրեց՝ ովքե՞ր ենք, որտեղի՞ց ենք: Հայրս ասաց՝ Հալեպից ենք եկել, Լյուդվիայի բարեկամներն ենք: Մեզ ներս հրավիրեցին:

Պարզվեց, որ մորաքույրս ամուսնացել էր թուրքի հետ, ինչպե՞ս, ինչու՞, չեմ կարող ասել, քանի որ շատ փոքր էի, եւ այդ պատմությունները իմ ներկայությամբ չէին պատմում: Սակայն տարիներ անց սկսեցի հասկանալ, որ նրա նմանները հազարավոր էին, եւ նրանք պարզապես այլ ընտրություն չունեին:

Մայրս եւ քույրը լացելով իրար գրկախառնվեցին: Այնքան նման էին իրար, կարծես թե մեկ խնձորը կիսած լիներ:

15 օրերի ընթացքում, որ Մարաշում էինք, մորաքույրս երբեւէ սեղանի շուրջ չի նստել, եթե ամուսինը ներկա էր: Մի օր բացատրեց պատճառը. «Ամուսինս եւ երեխաներս աչքիս առաջ են գալիս, երբ նրա հետ հաց եմ կտրում. ես նրա հետ չեմ կարող սեղան նստել»:

Դա, թերեւս, իր պայքարի եւ ըմբաստության յուրահատուկ դրսեւորումն էր:

Հաջորդ օրը, երբ մայրս եւ մորաքույրս առանձին էին, հարցրեցին միմյանց, թե արդյոք տեղյակ են ընտանիքի մյուս անդամներից: Մայրս պատմեց, որ միայն մեկ եղբոր մասին տեղեկություն ունի: Զարմանալի մի բան եղավ այդ ժամանակ. մորաքույրս իր դարակից հանեց Արսեն քեռուս ընտանիքի հետ նկարը եւ ասաց, որ տեղյակ է, որ նա ողջ է եւ Ֆրանսիաում է բնակվում: Մինչեւ հիմա ինձ հայտնի չէ, թե ինչպես նրան հասավ այդ նկարը, եւ ինչպես նա տեղեկացավ եղբոր մասին:

Բացի մորաքրոջիցս, եւս 6 հայ կանայք Մարաշում ամուսնացած էին թուրքի հետ: Այս կանայք իրար հետ շատ մտերիմ էին: Ամեն մեկն իր պատմությունն ուներ: Եվ կարծես թե ամեն մեկը ցանկանում էր հեռվից եկածին պատմել իր ցավը, իր պատմությունը: Ամեն օր մեկը մեզ հյուր էր կանչում: Հիշում եմ՝ ժամերով մայրս, մորաքույրս եւ այդ կանայք պատմություններ էին պատմում, արտասվում:

Հայ կանանցից մեկը՝ Մարե անունով, մեզ իրենց տուն հրավիրեց: Նրա առանձասենյակի պահարանում մեծ խաչ կար եւ Հիսուսի նկարը: Ասում էր՝ ամեն օր այդտեղ աղոթում է, եւ իրեն չեն արգելում դա:

Հիմա հասկանում եմ, որ այս կանայք ցեղասպանության անմիջական զոհերն են, որոնց չնայած բախտ է վիճակվել ապրել, սակայն ապրել են՝ ամեն օր «մի քիչ մեռնելով»: Հնարավոր չէ որեւէ մեկը իր կամքով ամուսնանար թուրքի հետ:

Հայրս մորաքրոջս գաղտնի առաջարկեց, որ եթե ցանկանում է՝ կարող է նրան փախցնել, մեզ հետ տանել, բայց նա հրաժարվեց: Թերեւս՝ ամաչում էր, վախենում էր, որ իրեն չեն ընդունի, չեն հասկանա:

Մարաշում գտնվելու օրերին մայրս մորաքրոջս խնդրեց իրենց հայրական տուն, հոր խանութ տանել, որ գոնե հեռվից տեսնի:

Մորական պապս մետաղե կաթսաներ էր պատրաստում եւ վաճառում: Մարաշում իրենց տան մոտ էլ խանութ ունեին:

Քայլեցինք դեպի պապիկիս խանութ. խանութն արդեն նոր տերեր ուներ: Մայրս խանութի դիմաց կանգ առավ՝ կարծես թե փորձելով իր հիշողության մեջ վերհիշել այն տեսարանը, երբ դեռ Մարաշը հայկական էր, ծնողները, քույր ու եղբայրները ողջ էին, եւ շատ հաճախ խաղում էին հոր խանութի առջեւ:

Ներսից թուրք վաճառականը գոռաց՝ ի՞նչ ես նայում, ի՞նչ ես ուզում: Մայրս ասաց՝ հորս խանութն է, գոնե նայելու իրավունք ունեմ:

Այնուհետեւ հասանք մորս հայրական տուն: Տան նոր թուրք տանտիրուհին նստած էր տան բակում: Մայրս նրան հարցրեց՝ արդյոք վարձով տալիս են տունը, թե չէ, ցանկանալով գոնե մտնել եւ տեսնել տունը, սակայն թուրք կինն ասաց, որ վարձով չեն տալիս, եւ հրաժարվեց թույլ տալ ներս մտնել:

7 տարեկան երեխա էի, եւ դժվար թե հասկանայի մորս, մորաքրոջս ապրումներն այն օրերին: Երբ արդեն պատկառելի տարիքի եմ հասել, հաճախակի եմ հիշում մանկությունս, հատկապես Մարաշում անկացրած այդ երկու շաբաթները: Բազմիցս ինձ հարցնում եմ՝ մայրս ի՞նչ էր զգում, ինչպե՞ս էր կարողանում դիմանալ այդ ամենին: Հարցերն անսպառ են դառնում: Եվ սկսում եմ հասկանալ, թե ինչու ծնողներս այդքան քիչ էին խոսում Ցեղասպանության եւ իրենց ապրումների մասին: Նրանք լռում էին՝ պարզապես ցանկանալով լռության մեջ խեղդել իրենց զգացմունքները, փորձելով մոռանալ, իրենց ցավը չփոխանցել իրենց ժառանգներին...»:

...Ես վերադառնում էի Սիդնեյից, բայց ողջ ճանապարհին հիշում էի նրա պատմած պատմությունը, որը տեսահոլովակի պես պտտվում էր աչքերիս առաջ: Եւ մտածում էի՝ քանի՛-քանի՛ հայ ընտանիքներ, գերդաստաններ ամբողջությամբ վերացան, կարծես թե գոյություն էլ չունեին: Միայն եզակիներին հաջողվեց փրկվել՝ շարունակելով իրենց ազգանունը: Հնարավոր չէ սպանել հիշողությունը: Հիշողությունը նաեւ պարտադրում է՝ չմոռանալ արդար դատի եւ պահանջատիրության մասին...

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Ապրում եմ խաղաղության երազանքով. կին ազատամարտիկ



Արցախյան շարժման, ազգային-ազատագրական պատերազմի մասին բազմիցս է խոսվել եւ դեռ շատ պիտի խոսվի: Սակայն, դժբախտաբար դեռ շարունակվում են ստվերում մնալ որոշ արժանի կենսագրություններ...

Աստղաշենցի Զոյային Ասկերանում բոլորը գիտեն: Գիտեն՝ որպես համարձակ, անվախ մի անձնավորության, որն իր ապրած կյանքով ապացուցել է բոլորիս հայտնի ճշմարտությունը՝ առյուծին էգ եւ որձ չի լինում:

Զոյա Մկրտչյանը ծնվել է 1940 թվականին, Աստղաշենում, գյուղացու բազմազավակ ընտանիքում: Նա ընտանիքի 9 զավակներից 4-րդն էր: Մանուկ հասակում բժիշկները նրա մոտ կանացի բարդ հիվանդություն հայտնաբերեցին եւ բուժվելու համար ուղարկեցին Բաքու: Այդ օրերը տիկին Զոյան դժվարությամբ է վերհիշում:

«Նախքան Բաքու մեկնելս բարեկամներս ինձ տարան Ասկերան, որ հաջորդ օրն այնտեղից ուղեւորվենք: Նախօրեին հայրս վատ երազ էր տեսել, եւ ցանկացավ նախքան մեկնելս տեսնել ինձ: Ես հորաքրոջս հետ արդեն տեղավորվել էի «Իկարուս» մակնիշի ավտոբուսի մեջ, երբ ականատես եղա, թե ինչպես քիչ հեռվում ազերի վարորդը մի տղամարդու մեքենայի տակ գցեց, որի արդյունքում մարդը տեղում մահացավ: Ամբողջ ճանապարհին լացում էի ավտոբուսում՝ հիշելով տեսարանը: Ավելի ուշ պարզվեց, որ այդ մարդը, որին վրաերթի էին ենթարկել, հայրս էր»,-հիշում է Զոյա Մկրտչյանը:

Մի քանի տարի տարբեր երկրներում բուժվելուց հետո վերադառնում է հայրական տուն՝ իր վրա վերցնելով ընտանիքի բեռը: Հայրական տունն արդեն քանդված էր: Մայրը միայնակ չէր կարող հոգ տանել 9 երեխաների մասին եւ միաժամանակ տուն կառուցել:

«Մենք միշտ աղքատ ենք ապրել: Նույնիսկ անկողին, սպիտակեղեն, հագուստ չունեինք: Քնում էինք ոչխարի մորթու, հին կարպետների վրա: Երբ վերադարձա, սկսեցի աշխատել: Կամաց-կամաց հայրական տունս կառուցեցի, ոտքի կանգնեցինք: Տարիների ընթացքում ամուսնացրի քույր-եղբայրներիս»,- ասում է նա:

Զոյան 4 մոտակա գյուղերի կոմերիտմիության քարտուղարն է եղել: Ակտիվ երիտասարդ էր: Հպարտությամբ է խոսում այն օրերի գյուղի երիտասարդության մասին.

«Բոլորն իմ ջահելներն էին, անուն առ անուն բոլորին գիտեի՝ ով ինչով է զբաղված, ինչ հնարավորություններ ունի, ինչ կարող է անել գյուղի համար: Միասին շատ երկար ճանապարհ ենք անցել: Ափսոս, որ այսօր շատերը չկան»,- այս ասելով՝ իրեն ոչ բնորոշ հուզմունք է հայտնվում դեմքին:

Անդրադառնալով Արցախյան շարժմանը՝ նշում է, որ դեռ ընդհատակյա շարժման ժամանակ հասկանալի էր նրա համար, որ ազերիների հետ բախումն անխուսափելի է:

«1988-ի սկզբներին Խրամորթում ազերիները ընկերուհուս ամուսնուն իր խաղողի այգում ողջ թաղեցին: Նման դեպքերը քիչ չէին: Ամեն ինչ լրջացավ փետրվարյան ցույցերից հետո: 1988 թվականի փետրվարի 22-ն էր: Ասկերան գնացի: Երբ Ասկերանի գարեջրի գործարանի մոտ հասա, տեսա մեծ թվով ազերիներ են գալիս: Դրանք ամենեւին էլ խաղաղ բնակիչներ չէին: Կատաղած ամբոխ էր, որն իր դիմաց ոչինչ չէր խնայում:

Զոյան անմիջապես վազում է փոստ: Այնտեղից կապվում է գյուղի հետ՝ տեղեկացնելով, որ ազերիները Ասկերանում հարձակում են գործել, եւ հնարավոր է՝ գյուղերի վրա հարձակվեն: Ասում է, որ գյուղի դպրոցն ու մանկապարտեզն անմիջապես փակեն, երեխաներին տուն ուղարկեն, գյուղում էլ տեղեկացնեն, որ զգույշ լինեն:

Ազերիներն այդ ընթացքում բավական առաջ էին եկել:

«Այսօր քչերն են հիշում այդ օրվա իրադարձությունները: Սակայն, եթե այդ օրը մեր տղաները նրանց չկանգնեցնեին, արյունահեղություն կլիներ: Ասկերանը երկու կողմից շրջափակված էր ազերիներով. մի կողմից Աղդամն էր (Ակնա), մյուսից՝ Խոջալուն (Իվանյան): Մերոնք թվով քիչ էին, սակայն հաստատակամ էին: Գիտեին, որ պետք է անեն հնարավորն ու անհնարինը ազերիներին կանգնեցնելու համար: Տեսա, թե ինչպես ամբոխին դեմ հանդիման դուրս եկան Վիտալի Բալասանյանը, Վաչագան Սանթուրովիչը, Զաբին (Յուրա Իշխանյան), Սասուն ու Սեյրան Ավագիմյանները (Թորսուլի զավակները) եւ այլոք: Զաբիի եւ Թորսուլի տղաներից մեկի ձեռքին զենք կար: Զաբին կրակեց եւ ազերի ոստիկան սպանեց: Դրանից հետո ամբոխը ցրվեց՝ մտածելով, որ բոլոր հայերը զինված են: Զաբիին եւ Թորսուլի տղաներին ձերբակալեցին եւ երկար ամիսներ Շուշիի բանտում չարչարանքների ենթարկեցին»:

Այս դեպքերից հետո աստղաշենցիները տեղի ազերի բնակիչներին ստիպեցին, որպեսզի հեռանան գյուղից:

Գյուղի տղաներն էլ զոր ու գիշերը հսկում էին գյուղի անվտանգությունը:

Պատերազմի մասին խոսելիս Զոյան մի դեպք հիշեց, որը ցնցել էր ամբողջ գյուղը: 1991 թվականի մայիս ամիսն էր: Գիշերվա 2-ին ԱԱԾ-ում աշխատող ծանոթներից մեկն իրենց տուն եկավ եւ հայտնեց, որ օմօնականները հաջորդ օրը գյուղ են գալու զենքեր փնտրելու: Ասաց, որ Զոյան թաքցնի զենքերն:

Գիշերվա կեսին մի քանի երիտասարդի հետ բոլոր զենքերը թաքցրեցին: Առավոտյան 6-ին գյուղն արդեն շրջափակել էինք օմօնականները, որից հետո էլ ներս մտան տանկերը:

Այդ պահին Զոյան հիշեց, որ հավաքնում մեկ արկղ նռնակ կար, որը մոռացել էր թաքցնել: Բամբակե գիշերանոց հագավ, եւ նռնակները թաքցրեց գիշերանոցի տակ: Մի քանի րոպե չանցած՝ 16 օմօնականներ տան բակում էին:

Ներս մտան տուն: Տան բազմոցին պառկած էր սրտի կաթված ստացած մայրը: Հրացանով հրեցին եւ մորը գետնին փռեցին, որից հետո ստուգեցին բազմոցի տակը: Ամբողջ տունը տակնուվրա արեցին, ոչինչ չգտնելով՝ հեռացան:

«Իրենց հետեւից դուրս եկա՝ իմանալու, թե գյուղում ինչ է կատարվում: Հասա ճաշարանի մոտ: Մի ռուս զինվոր տանկից իջավ, եւ անուն-հայրանունս կանչելով՝ պահանջեց ճաշարանի բանալին: Հասկացա, որ տանկում ազերի կա, որը գյուղացիներին լավ է ճանաչում: Դա ռուսական խաղաղապահ բանակ չէր, սա ռուս-ադրբեջանական հրոսակախումբ էր, ով ոչինչ չէր խնայում իր առջեւ: Ճաշարանը մի քանի վայրկյանում տակնուվրա արեցին՝ կոտրելով սառնարանները, հեռուստացույցը, թալանելով ինչ որ ցանկացան:

Ռուս զինվորը մոտեցավ ինձ եւ հարցրեց, թե ո՞ւր են զենքերը, պատասխանեցի, որ չգիտեմ: Այդ պահին երկու անգամ ապտակեց ինձ: Արյունս վարկյանական հոսեց ցած, հագուստս արյունոտվեց: Հետո նորից հարցրեց, եւ սպասված պատասխանը չստանալով՝ «դուբինկայով» զարկեց ոտքերիս, ձեռքերիս, եւ գլխիս: Ատամներս ջարդվեցին: Հետո նա հավաքեց ոսկե ատամներս: Հասկանալով, որ ոչինչ չեմ ասելու՝ հեռացավ»:

Զոյա Մկրտչյանը պատմում է, որ երբ դուրս եկավ ճաշարանից, դիմացը ահավոր տեսարան բացվեց: Գյուղի երիտասարդներին՝ թվով 28 հոգու, 3 շարքով պառկեցրել էին ցեխի մեջ եւ շներին էլ նրանց շարքի վրա կանգնեցրել:

Այնուհետեւ նրանց տեղաորեցին մեքենաները եւ տարան Շուշիի բանտ, որտեղ պահեցին մեկ ամիս:

«Բանտում նրանց ամեն տեսակի չարչարանքների ենթարկեցին: Դա է պատճառը, որ հիմա շատերը վատառողջ են»:

Երբ օմօնականներն իրենց ուզած թալանը կատարելուց հետո գնացին, Զոյան շտապեց կոլտնտեսության պահեստ: Այն տակնուվրա էին արել, թալանել, դռները կոտրել: Կազմակերպեց, որ դռները ծածկեն, որ պետք է գոնե գյուղը ցորեն ունենա, նեղ օրերին սովամահ չլինեն: Կանխազգում էր, որ դեռ դժվար ժամանակներ են սպասվում:

Հիշում է՝ Արցախյան շարժումը դեռ ընդհատակյա փուլում էր, երբ Հայաստանից մոտ 30 երիտասարդ Հովսեփավան գյուղ էին եկել, եւ անհրաժեշտ էր այդ երիտասարդներին տեղավորել գյուղացիների տներում: Նա 5 երիտասարդի իրենց տուն բերեց:

«Շատ մտերմացանք: Տղաներից մեկը՝ Սարգիսը, ասաց, որ Հայաստան մեկնելուն պես զենք կհավաքի եւ ինձ կուղարկի: Հաջորդ օրը, Սպիտակի երկրաշարժի լուրը լսելուն պես, մեկնեցին այնտեղ»:

Պատերազմը նոր էր սկսվել, երբ Սարգսից լուր ստացավ, որ զենքերը պատրաստ են, եւ սպասում է կարգադրությունների, թե ինչպես ուղարկի գյուղ:

«Մեր գյուղից մեկը՝ Հայկ անունով, հայաստանցի հարս էր բերել: Աղջիկը հղի էր եւ ծննդաբերելու համար գնացել էր Հայաստան: Սարգսին ասացի՝ զենքը կփոխանցես Հայկին եւ կասես, որ բարուրի պես փաթաթի, իբր թե զույգ երեխաներ են, եւ կնոջը տա: Երբ մտնեն ինքնաթիռը՝ ստուգելու, թող կրծքին սեղմի, որպեսզի կարծեն, թե կրծքով կերակրում է: Այդպես էլ արեցին եւ զենքը գյուղ հասցրին»:

Գյուղը 12 զոհ է ունեցել, եւ բոլորի հետ կարծես թե մի քիչ էլ ինքն է «մահացել»:

«Վովան (Վովա Ղազարյան, գյուղի ջոկատի հրամանատար) կեսգիշերին գալիս, ասում էր՝ Զոյա՛, զոհ կա, պիտի դու ընտանիքներին հայտնես այդ լուրը: Հասկանում էի, որ դժվար պարտականություն է, բայց պետք է անեմ: Դժվարությամբ, բայց միշտ համաձայնում էի:

Ամեն մեկի հետ նորից ու նորից ասես մահանում էի...

Հերթական զոհը հայր չուներ, մայրն էլ Երեւանում էր ապրում, եւ անհնար էր, որ այդ կինը գար հասներ Աստղաշեն: Ասացի՝ նա բոլորիս տղան է, մենք էլ ամեն ինչ կանենք: Բացեցինք հայրական տան դռները, դիակը այդտեղից էլ վերցրինք: Մինչեւ օրս, երբ գերեզմանոց եմ այցելում, առաջին ծաղիկը նրա գերեզմանաքարին եմ դնում»:

Զոյան խոստովանում է, որ կյանքում ոչնչից չի վախենում: Միայն մեկ բանից է սարսափում՝ պատերազմից:

«Իմ սերնդակիցները դժվար մանկություն, պատանեկություն, այնուհետեւ երիտասարդություն են ունեցել: Սով ենք տեսել, պատերազմով ենք անցել, ամենասարսափելին էլ՝ ընկերներ, հարազատներ ենք կորցրել: Այսօր, փառք Աստծո, չնայած կյանքը դժվար է, բայց սով չկա: Միակ բանը, որ ցանկանում եմ, որ վերջնական խաղաղություն հաստատվի Արցախում եւ ժողովուրդը վերջապես ազատ շունչ քաշի: Ապրում եմ խաղաղության երազանքով»:

Ա. ՆԱՐԻՆՅԱՆ

Նրանք փրկեցին հազարավոր կյանքեր

Արցախյան պատերազմի ժամանակ դաշտային հոսպիտալներում աշխատող բուժքույրերն իրենց կյանքի լավագույն տարիները նվիրաբերել են հայրենիքը պաշտպանող զինվորի կյանքը փրկելուն: Այդ ժամանակն իրենցը չէր, այն ժողովրդինն էր, անկախության երազանքի իրագործմանը: Կար նպատակ, որին առանց նվիրումի հնարավոր չէր հասնել...

«Քրոջս ասում էի՝ գնում եմ ամուսնուդ վրեժը լուծելու»

Արեւիկ Անդրյանը պատերազմի տարիներին իր բուժքույրական պարտականությունը կատարել է Արցախի մի շարք շրջաններում՝ Մարտակերտ, Մարտունի, Ղուբաթլու, Ֆիզուլի, Հադրութ... Պատերազմից մինչ օրս աշխատում է հոսպիտալում՝ վիրաբուժական բաժանմունքի բուժքույր է:

Նրան տեսնելուն պես՝ պարզ է դառնում, թե ինչու են ծնողներն աղջկան այդ անունով կոչել: Արեւն արեւի պես է, ջերմ է ու լուսավոր, բարի է ու խանդավառ:

Արեւիկը 26 տարեկան էր, երբ պատերազմը սկսվեց: Ապրում էր Ստեփանակերտում՝ քրոջ ընտանիքի հետ, աշխատում՝ Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկայում:

Արցախյան շարժման հասունացման տարիներին, ասում է, որ հաճախ էր գնում միտինգների: «Մտածեցի՝ ի՞նչ անեմ, որ մի բանով էլ ես օգտակար լինեմ իմ հայրենիքին. հաջորդ օրը ընկերուհիներիս հետ գրանցվեցինք զինկոմիսարիատում՝ դաշտային հոսպիտալում աշխատելու նպատակով», -ասում է Արեւիկը:

Այդ օրերին զոհվել էր նաեւ Արեւիկի քրոջ ամուսինը:

«Որոշումս հստակ էր, սակայն իմ՝ հոսպիտալում աշխատելը դրանից հետո վրեժխնդրության հարց էր: Քրոջս ասում էի՝ գնում եմ ամուսնուդ վրեժը լուծելու: Հետո էլ ամեն մեկս պարտականություն ունեինք մեր հողի հանդեպ, պիտի գնայինք»,- ասում է նա:

Արեւիկը պատմում է, որ հոսպիտալում աշխատելը սկզբում դժվար էր, դժվար էր նաեւ համակերպվել կորուստների հետ:

«Ամեն մի զոհի եւ մահի դեպքում տխրում էինք, լացում, հետո, սակայն, կարծես թե համակերպվել էինք այն մտքի հետ, որ հողը արյունով են պահում, եւ առանց զոհերի պատերազմ չի լինում,- ասում է նա եւ շարունակում,- բոլորը զարմանում էին, թե ինչպես ենք ծանր վիրավորներին խնամում, դիակները կարգի բերում, ուղարկում հարազատներին: Սակայն մենք երբեք չենք հուսահատվել, կամ էլ քարսիրտ էինք դարձել. ընկերուհիներով հույս էինք տալիս իրար եւ մտածում միայն լավ բաների մասին: Հումորը չէր պակասում այն օրերին: Լացն ու ծիծաղը խառնվել էին իրար, երկուսն էլ կիսատ, երկուսն էլ ծանր»:

Արեւիկը նշում է, որ ամենաերջանիկն այն օրերն էին, երբ շոկոլադ էին ունենում:

«Դաշնակցական Կարեն Արզումանյանը /Բադարայի ջոկատի հրամանատար/ վիրավորվել էր եւ տեղափոխվել հոսպիտալ: Ընկերները նրա համար մի տուփ քաղցրավենիք էին ուղարկել, մենք էլ գիտեինք այդ տուփի մասին: Ամբողջ օրը խնամում էինք նրան, իսկ երբ գալիս էր սրսկում անելու կամ վիրակապելու ժամանակը, աղջիկներով կռվում էինք, թե ով է գնալու,- հիշում է Արեւիկը: - Իհարկե, Կարենը միայն սրսկում անողին չէր հյուրասիրում. մի բուռ կոնֆետ էր տալիս: Այն տարիներին երջանիկ պահերը քիչ էին, այդ պատճառով ամենքս էլ ուզում էինք հյուրասիրել մեր ընկերներին: Այսօրվա պես հիշում եմ այդ կոնֆետների համը. երեւի երբեք չեմ մոռանա»:

Արեւիկը պատմում է, որ դաշտային հոսպիտալների հարակից տարածքների ռմբակոծության ժամանակ ընկերուհիներն ասում էին՝ ինչո՞ւ ես կանգնել, վազիր՝ թաքնվենք, ասում էր. «Ինձ ի՞նչ է եղել որ: Ամուսնացած չեմ, երեխաներ չունեմ, ծնողներ չունեմ: Դուք թաքնվեք, ես շարունակեմ գործս»: Ծիծաղելով պատմում է, հետո մի պահ լռում: ժպիտն էլ կամաց-կամաց մարում է, եւ շարունակում է. «Որդիս հաջորդ տարի զորակոչվելու է բանակ: Պատերազմի տարիներին այնքան սարսափելի բաներ ենք տեսել՝ որդու, ամուսնու, եղբոր կորուստ, այսօր էլ ոչ ոք ապահովագրված չէ: Հիմա կարծես ավելի շատ եմ անհանգստանում, հիմա վտանգն ավելի մեծ է, քան իրական պատերազմի ժամանակ... Այն տարիներին բոլորս երազում էինք, որ պատերազմը հաղթենք եւ խաղաղություն իջնի մեր երկրի վրա... Այո, մենք հաղթեցինք, սակայն չկա մի օր, որ չլսենք դիրքերում ռմբակոծությունների եւ զոհերի մասին: Ուզում եմ, որ մեր զինվորների ամենածանր հիվանդության դեպքը թեթեւ հարբուխը լինի: Միակ երազանքս խաղաղությունն է»,- ասում է նա:

Արեւիկն ամուսնացել է 31 տարեկանում:

«Իմ բոլոր ընկերուհիներն էլ ուշ են ամուսնացել, բայց այն ժամանակ մեզ «տանը մնացած» չէին ասում,- կատակում է բուժքույրը,- չէինք համարձակվում սիրահարվել. քիչ չէին նոր ամուսնացած, կամ նշանված տղաների մահվան դեպքերը: Մենք տեսնում էինք նրանց հարազատների վիշտը, այդ պատճառով էլ վախենում էինք»:

Արեւիկի ամուսինը պատերազմի տարիներին վիրավորվել է եւ տեղափոխվել հոսպիտալ, սակայն հոսպիտալում տեղ չլինելու պատճառով տեղափոխել են մարզային հիվանդանոց:

«Ամուսինս ասում է՝ ո՞ւր էիր դու այն ժամանակ, ի՞նչու հենց այդ օրն էր ամբողջ հոսպիտալը զբաղված: Կարող էինք ավելի շուտ ծանոթանալ»,- ասում է աչքերի երջանիկ ու արեւային փայլով: Ասում է, որ երջանիկ է, լավ ընտանիք ունի, երկվորյակներ է լույս աշխարհ բերել՝ տղա եւ աղջիկ: Աղջիկն էլ մոր պես ուզում է բժիշկ դառնալ:

«Այսօր ես իմ սիրած գործն եմ անում, ընկերուհիներս էլ, ինչպես այն ժամանակ, իմ կողքին են: Հիշելու եւ պատմելու շատ բան կա: Ամեն անգամ հանդիպելով՝ տարբեր դեպքեր ենք վերհիշում: Իսկ դրանք այնքան շատ են,- նշում է Արեւը,- եթե նորից մի բան լինի, այն ժամանակվա պես համախմբված առաջինը մենք ենք կամավորագրվելու: Այսօր մենք նույնպես պայքարում ենք մեր զինվորների առողջության համար: Գործը կա, մենք էլ գլուխներս քաշ գցած, առանց բողոքելու աշխատում ենք»:

«Սոված թե կուշտ, մենք միասին էինք»

Գայանե Հայրապետյան

Արցախյան շարժման տարիներին Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի փակ լինելու պատճառով Գայանեն ընդունվել է Կապանի բժշկական քոլեջը: Մի տարի հետո Գայանեն տեղափոխվել է Արցախ:

«Ծնողներս չէին ուզում, որ տեղափոխվեմ այստեղ, նրանք ինձ նաեւ ապահովության համար էին ուղարկել՝ Կապանում սովորելու, սակայն այնտեղ չէի դիմանում, հոգեբանորեն ճնշված էի: Շարժումն սկսված էր արդեն: Ժամեր էի հաշվում, որ գամ Արցախ. ուզում էի մի բանով օգնեի»,- ասում է Գայանեն:

19 տարեկան է եղել, երբ կամավորագրվել է: Ուսումնարանը դեռ չավարտած՝ կես հաստիքով աշխատում էր Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոցում: Այդտեղ էլ բուժական անձնակազմին հայտնել էին, որ պատերազմի դաշտում բուժօգնություն պիտի ցուցաբերեն եւ առաջարկել էին կամավորագրվել:

«Ծնողներս չէին համակերպվում որոշմանս հետ: Ասում էին՝ աղջիկն ինչ գործ ունի ռազմի դաշտում: Բայց ես չէի կարող դավաճանել իմ ընկերուհիներին ու մեր բժիշկներին. այդ տարիներին բոլորս ընկերներ էինք,- պատմում է նա: - Ժամանակ առ ժամանակ փողոցում հանդիպում եմ պատերազմի տարիներին վիրավորված զինվորների: Այսօրվա պես հիշում եմ, թե ով ինչպես է վիրավորվել եւ ինչ վնասվածք է ստացել»:

Գայանեն պատմում է, որ Նարեշտար-Չարեքտարի բաց դաշտում հայտնվել էին շրջափակման մեջ: Սանիտարական ՈՒԱԶ մեքենան վիրավորներ էր տեղափոխել, ու իրենք պատգարակներով, բժշկական գործիքներով մնացել էին բաց դաշտում: Ասում է՝ շշկռված նստած էինք: Բուժքույրերից ամեն մեկին մի նռնակ էին տվել մինչ այդ, որ անելանելի դրության դեպքում օգտագործեն: «Մտածում էինք՝ նռնակի օղակը կքաշենք, մի քանի թուրքի կվերացնենք, մենք էլ հետները: Բայց մենք ուրախ էինք, որ էդ քայլը պիտի անեինք: Մեկ էլ մի «ԳԱԶԻԿ» եկավ մեր ետեւից, դուրս եկանք էդտեղից: Մի տեսակ տխրեցինք: Ախր ուրիշ բանի էինք նախապատրաստվել...»,- ասում է նա:

Գայանեն նշում է, որ պատերազմի տարիներից ինքը նկար չունի: «Մի նկար ունեմ. թղթաբանության համար էր անհրաժեշտ, նկարվել էի: Երեւի մարդիկ կմտածեն՝ ի՞նչ եմ արել. նկար չունեմ, ուրեմն ոչ մի բան չեմ արել»,- կատակում է նա:

«Այսօր մեզանից շատերն արդեն թոշակի են անցել, կամ ուրիշ տեղ են աշխատում, բայց, փառք Աստծո, բոլորս ողջ ենք մնացել: Մենք դաշտային հոսպիտալներում անորոշության մեջ էինք ապրում՝ չիմանալով կմեռնենք, թե ողջ կմնանք, բայց բոլորիս նպատակն էր հաղթել, ինչ գնով էր լինի, հաղթել՝ թեկուզ արյան գնով: Նամակներ էինք ստանում, կարդում ու դառնորեն լաց լինում՝ մտածելով, որ էլ չենք տեսնի մեր հարազատներին»,- պատմում է Գայանեն:

Գայանեն նշում է, որ դաշտային հոսպիտալներում ամենադժվար խնդիրը ջրի պակասն էր՝ հատկապես ձմռան ամիսներին: Ստիպված ձյունը հավաքում, հալում էին ու օգտագործում ե՛ւ խմելու, ե՛ւ մյուս կարիքների համար:

«Սոված թե, կուշտ՝ միասին էինք, ու մեկ գաղափարի շուրջ էինք հավաքվել: Երբեք չէինք բողոքում»:

Մինչ պատերազմը, Գայանեն հանդիպում էր մի տղայի հետ: Տանն էլ գիտեին, խոսք առնելու էին եկել: Սակայն տղան զոհվում է: «Դրանից հետո ո՞վ էր անձնականի մասին մտածում. առաջին հերթին գործս էր»,- ասում է նա:

Պատերազմից հետո Գայանեն ամուսնացել է, ունի երկու որդի:

«Պատերազմի տարիներին, երբ երկու րոպե ազատ ժամանակ էինք ունենում, զրուցում ու պատկերացնում էինք, որ պատերազմն ավարտվելուն պես հայրենիքին ծառայելու համար առողջարան կուղարկեն՝ հանգստանալու: Մեզ 4 տարով Խոջալուի հոսպիտալ են տեղափոխել: Ընկերուհիներով կատակով ասում էինք, որ Խոջալուն է մեր առողջարանը»,- ծիծաղով ասում է բուժքույրը եւ ավելացնում, որ պատերազմի տարիներին արժեքներ կային, որոնք այսօր ցավոք չկան, կամ փոխվել են:

«Այն ժամանակ պարզություն կար, ընկերություն կար, մարդն ու նրա կատարածն արժեք ունեին, հիմա, սակայն, ամեն բան փոխվել է»:

Գայանեի երազանքն է՝ որ այլեւս ոչ մի հայ կին չայրիանա, ոչ մի երեխա որբ չմնա, ոչ մեկի սիրող սիրտը չկոտրվի...

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Դուշման Վարդանը կդառնար 50 տարեկան



Մարտի 8-ը Արցախյան պատերազմի հերոս, 2-րդ գումարտակի փոխհրամանատար, «Մարտական խաչ» առաջին եւ երկրորդ աստիճանի շքանշանակիր, ՀՅԴ անդամ Վարդան Ստեփանյանի /Դուշման Վարդանի/ ծննդյան օրն է. նա կդառնար 50 տարեկան:

Դուշման Վարդան Ստեփանյանը 18 տարեկան էր, երբ որոշեց գնալ Շենգավիթի զինվորական կոմիսարիատ՝ խնդրանքով, որ իրեն ուղարկեն Աֆղանստան: Ծնողներին Վարդանն ասել էր, որ ծառայելու է Հունգարիայում. նամակներ էր գրում, պատմում Հունգարիայի մասին, այնինչ՝ մասնակցում էր Աֆղանական պատերազմին: Վարդանի մայրը հետագայում, պատահականորեն Վարդանի ընկերոջից է իմանում, որ որդին իրականում ոչ թե Հունգարիայում է, այլ Աֆղանստանում, եւ որ նամակների բովանդակությունը հորինված է: Աֆղանական պատերազմի մասնակցության համար Վարդանին կնքեցին «Դուշման» անունով:

Հարցազրույցներից մեկում Վարդանի քույրը՝ Արմինե Ստեփանյանը, նշել էր, որ Վարդանը քչախոս էր եւ անմիջապես չէր բացում իր հոգու գաղտնիքները. երկար ժամանակ էր պահանջվում, որպեսզի նա պատմեր իր հետ կատարված դրվագների մասին:

«Մի օր պատմեց, որ Աֆղանստանում մի ամբողջ գիշեր պառկել էր ընկերոջ դիակի վրա, որպեսզի բորենիները չվնասեն ընկերոջը... Պատմեց նաեւ, որ ուղղաթիռով Կանդագարից-Շինդան տեղափոխվելու ժամանակ ուղղաթիռում խորհրդային զինվորների երեք դիակներ կային, որոնք ուղղաթիռի շարժման ժամանակ մի կողմից սահելով՝ մյուս կողմն էին անցնում: Սիրտս ցավեց դիակների համար, որոնք նույնիսկ մահվան մեջ անհանգիստ էին... Վարդանը դիակները տեղափոխեց ուղղաթիռի մի կողմը, պառկեց եւ մեջքով հենվեց նրանց, որպեսզի չշարժվեն եւ հանգիստ լինեն», - պատմում է Արմինեն եւ նշում, որ միշտ մտավախություն ուներ, որ կորցնելու է եղբորը, այդ պատճառով ուզում էր նրա մասին ամեն ինչ իմանալ:

1988 թվականից Դուշմանն ամբողջությամբ նվիրվում է Արցախյան շարժմանը, ժողովրդի ազատագրական շարժմանը, ճանաչում ու հարգանք ձեռք բերում ամենուր, դեռեւս կենդանության օրոք դառնում իսկական լեգենդ:

Ձենք-զինամթերք ձեռք բերելու համար հասնում էր Մոսկվա, տարբեր քաղաքներ: Հեշտ չէր նաեւ Խորհրդային անվտանգության կոմիտեի հսկողության ներքո մարդկանց հավաքագրելու գործընթացը: Բացի ճակատից, գործել է նաեւ թիկունքում: Կապ պահպանելով Մոսկվայի հայ համայնքի, ինչպես նաեւ անվանի լրագրողների հետ՝ մեծ է եղել նրա դերը Արցախյան շարժումը Մոսկվայում լուսաբանելու, իսկությունը հանրությանը ներկայացնելու, հասարակական կարծիք ստեղծելու առումով:

Վարդանն՝ առաջին անգամ իբրեւ մարտական մարզիչ դեռ 1988թ-ին էր մեկնել Արցախ:

Նա ոչ միայն մասնակցեց զինյալ պայքարին, այլեւ եղավ բազում երիտասարդների ուսուցիչը, մարտական դաստիարակը եւ, վերջապես, անվախ հրամանատարը: Նա Արցախի բանակի ստեղծողներից մեկն էր: Վարդանի զինվորներն այսօր արցախյան բանակի հմուտ հրամանատարներ են:

ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի առաջին հրամանատար Արկադի Կարապետյանը նշում է, որ Վարդանի հետ ծանոթացել է դեռ 1988թ., Երեւանում, երբ մի խումբ տղաներով մտածում եւ ծրագրում էին, թե ինչպես են զենք հայթայթելու եւ մարդկանց հավաքագրելու՝ Արցախ մեկնելու համար:

«Միանգամից ընկերացել էինք Վարդանի հետ: Նա լավագույն արժեքների տեր մարդ էր՝ խիզախ էր, համարձակ: Նրա նման մարդկային որակ եւ գործելու պատրաստակամություն ունեցող մարդիկ քիչ էին այդ տարիներին,- նշել է Ա.Կարապետյանը,- մինչ Շուշիի ազատագրումը՝ Վարդանն ընկել էր մոտոցիկլետից եւ վնասել ոտքը: Դժվարանում էր քայլել: Որոշվել էր, որ Վարդանը չի մասնակցելու «Հարսանիք լեռներում» գործողությանը: Հոգեկան ծանր վիճակում էր. չէր կարող հանդուրժել այն փաստը, որ Շուշիի ազատագրմանը չի մասնակցելու:

Գործողությունից մի քանի օր առաջ տեսա նրան: Պատմեց որոշման մասին, ես էլ ասացի՝ «քեփդ քյոք պահե», կգաս ինձ հետ. մարդ ես, եթե ինձ հետ մի բան պատահի, դու կստանձնես հրամանատարությունը: Ուրախացավ էր, աշխարհը կարծես իրենն էր դառել. մինչեւ հիմա հիշում եմ նրա հայացքը...»:

«Մարտի դաշտում Վարդանը շատ հանգիստ էր: Կռվում էր սառնորեն, առանց ոգեւորության: Նա գիտեր իր գործը, գիտեր, որ այս պատերազմի հաղթանակը մերն է լինելու»,- շեշտում է Ա. Կարապետյանը:

Ստրատեգիկ կարեւոր նշանակություն ուներ Լեսնոյ գյուղի ազատագրումը: Եթե չվերցնեին Լեսնոյը, ապա թշնամին, Պատարա եւ Աստղաշեն համայնքները գրավելով, հեշտությամբ Լաչինով ճանապարհ կբացեր դեպի Խոջալու եւ Աղդամ՝ ամրապնդելով դիրքերը:

Դուշման Վարդանը եւ մի շարք ջոկատներ հանձն են առնում այս կարեւոր գործը եւ, գծագրելով տեղամասի գրավումը, մի քանի օր առաջ մեկնում են Պատարա համայնք եւ Օսկավանք կոչվող տարածքում մարզում եւ պատրաստում են գյուղի ջոկատի անդամներին, ինչի արդյունքում՝ փետրվարի 22-ի, լույս 23-ի գիշերը առանց զոհեր տալու գրավում են Լեսնոյը:

Արցախյան պատերազմի մասնակից, Պատարայի ջոկատի անդամ Սուրեն Օհանյանը, ով մասնակցել է նաեւ Լեսնոյի գրավման գործողությանը, նշում է, որ Վարդանն էր առաջինը մտել գյուղ:

«Միշտ առջեւում ինքն էր, մենք՝ իր հետեւից: Հարգում էինք նրան, գիտեինք, որ մասնակցել էր Աղվանական պատերազմին, որ փորձառու էր, բանիմաց, դրա համար, մեզ համար պատիվ էր նրա նման հրամանատար ունենալը: Մենք գիտեինք, որ նրան հետեւելով՝ կհասնենք արդյունքի»,- ասում է Ս. Օհանյանը եւ նշում, որ Լեսնոյի գրավման գործողությունում Վարդանի դերն անգնահատելի է:

Գործողությունից հետո 70 հոգուց բաղկացած ջոկատները երկու օր մնացել են Պատարա գյուղում, պատասխան հարձակման դեպքում հակահարված տալու նպատակով:

Լեսնոյից Վարդանը շտապեց Ստեփանակերտից Ասկերան ձգվող ճանապարհի 10-րդ կիլոմետրում գտնվող Խոջալուի օդանավակայան: Իսկ Խոջալուի օդանավակայանը թուրքերի ձեռքին էր: Անհրաժեշտ էր վերցնել այն: Այս գործողությունը Վարդանի մասնակցությամբ նույնպես պսակվեց հաջողությամբ:

Արցախյան պատերազմի մասնակից, Պատարայի ջոկատի հիմնադիր Կարեն Արզումանյանը, խոսելով Դուշման Վարդանի մասին, նշում է, որ պատերազմը նրա տարերքն էր:

«Շատերս ենք նրանից սովորել մարտնչել, նա կռվում էր հերոսաբար, մեր առաջնորդն էր եւ ոգին, դրա հետ մեկտեղ՝ բարի էր եւ պատրաստ զինվոր»,- ասում է նա:

Վարդանը մասնակցել է Երասխավանի, Շահումյանի, Ասկերանի շրջանների ինքնապաշտպանության մարտերին, Կրկժանի, Մալիբեյլիի, Լեսնոյի, Խոջալուի, Շուշիի, Բերդաձորի եւ Լաչինի ազատագրմանը:

Շուշիի ազատագրումից հետո ընկերները երկար որոնեցին Վարդանին եւ գտան հայկական գերեզմանոցում: Նա շամպայն էր լցնում հին գերեզմանաքարերին եւ կոչում. «Մեր պապեր, Շուշին ազատագրված է, հանգստացեք»:

Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու կողքին, պապերի շիրիմների կողքին Վարդանը տուն էր վերցրել. որոշել էր հաղթանակից հետո Արցախում ապրել:

«Երնեկ նրան, ով Մասիսը տուն կբերի». այս խոսքերը նույնպես Դուշման Վարդանն է ասել:

Տա Աստված՝ մեր սերունդը շարունակի Վարդանի գործը, եւ նրա խոսքերը նպատակ դարձնելով՝ վերադարձնի Մասիսը եւ վերահաստատի հայի՝ Հայոց հայրենիքում ապրելու իրավունքը:

Լ. ԹԵՎՈՍՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ